«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2 ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը պետական տուրքի հարցը համարում է լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Թեյսթի Գրուպ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 17.11.2022 թվականին հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2022 թվականի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված «Թեյսթի Գրուպ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**